ՀՀ 2027 ԹՎԱԿԱՆԻ
ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏ

Հայտատու մարմինը՝ *ՀՀ արտաքին գործերի նախարարության դիվանագիտական դպրոց ՊՈԱԿ*

Հայտի հաստատման ամսաթիվը՝ *ՄԱՐՏ 2026 թվական*

1. ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԹԻՐԱԽՆԵՐԸ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

ՀՀ ԱԳՆ դիվանագիտական դպրոցի նպատակները սահմանված են ՀՀ դիվանագիտական ծառայության մասին օրենքով, ՀՀ կառավարության 2009թ. սեպտեմբերի 23-ի N 1111 որոշմամբ և Դպրոցի կանոնադրությամբ.

1) դիվանագետների, պետական մարմինների արտաքին կապերի համար պատասխանատու ստորաբաժանումների աշխատողների վերապատրաստում,

2) դիվանագիտական կադրերի պատրաստումը՝ բարձրագույն կրթություն ունեցող Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին հատուկ մասնագիտական գիտելիք տրամադրելու միջոցով,

3) միջազգային հարաբերությունների ոլորտում միջազգային գիտակրթական համագործակցությանը մասնակցությունը,

4) այլ ուսումնական ծրագրերի իրականացումը:

Այս նպատակներից ելնելով՝ Դիվանագիտական դպրոցի գործունեության շարունակական թիրախներ են մնում.

- ՀՀ ԱԳՆ դիվանագիտական դպրոցի՝ որպես որակյալ կրթական և վերապատրաստման ծրագրեր իրականացնող հաստատության կարողությունների ամրապնդումը,
- Դիվանագետների վերապատրաստման ծրագրերի հետագա կատարելագործումը և շարունակական իրագործումը,
- Օտարերկրյա դիվանագետների վերապատրաստման ծրագրերի շարունակական իրագործումը և մասնակիցների աշխարհագրության ընդլայնումը,
- Արտաքին քաղաքականության և դիվանագիտության ոլորտում գիտահետազոտական աշխատանքների ձեռնարկումը և դրանց մասնակցությունը,
- Դիվանագիտական դպրոցի՝ որպես արտաքին քաղաքականության և դիվանագիտության ոլորտում քննարկումների հարթակի կայացումը,
- Դիվանագիտական դպրոցի՝ որպես աշխարհում տեղի ունեցող գլոբալ և տարածաշրջանային նշանակության իրադարձությունների վերլուծության և արդի մարտահրավերների վերաբերյալ դիրքորոշումների քննարկման և ձևավորման հարթակի կայացումը,
- Դիվանագիտական դպրոցի և լեզվի ուսուցման արտերկրի հեղինակավոր կենտրոնների համատեղ ջանքերով մշակված «Անգլերեն դիվանագետների համար» դասընթացի հետագա դասավանդումը և նոր ունկնդիրների ներգրավումը և արդեն ներդրված մյուս լեզուների՝ գերմաներենի, իսպաներենի, վրացերենի թուրքերենի և ադրբեջաներենի հաջորդող մակարդակներում ուսուցանումը,
- Ըստ պահանջի՝ վերապատրաստման նոր, այդ թվում՝ օտար լեզուների դասընթացների ներդրումը,
- Վերապատրաստման, թեստավորման և քննական եղած մեթոդների և մեխանիզմների կատարելագործումը և նորերի ներդրումը,
- Դիվանագիտական դպրոցի գրադարանի համալրումը մասնագիտական ժամանակակից գրականությամբ:

ՀՀ ԱԳՆ դիվանագիտական դպրոցի նպատակներն ու թիրախները բխում են ՀՀ կառավարության ծրագրի 1.1 Արտաքին քաղաքականության, 4.3 Կրթության և 6.3 Հանրային ծառայության համակարգի և մարդկային ռեսուրսների կառավարման կետերից: ՀՀ արտաքին քաղաքականության առաջնահերթություններն իրականացնելու, ՀՀ պետական շահերը պաշտպանելու, այլ երկրների հետ երկկողմ համագործակցություն հաստատելու և խթանելու համար Դիվանագիտական դպրոցն իրականացնում է դիվանագիտական կադրերի պատրաստում և վերապատրաստում, այդ թվում՝ պետական այլ ծառայողների վերապատրաստում:

Դիվանագիտական դպրոցի ծրագրի վերջնական արդյունքի չափորոշիչներն են միջազգային հարաբերությունների ոլորտում ներգրավված պետական ծառայողների աշխատանքի և դիվանագիտական ծառայության արդյունավետության բարելավումը:

ՀՀ ԱԳՆ դիվանագիտական դպրոցի գործունեությունն առնչվում է ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակներից 4-րդի՝ որակյալ կրթության հետ, մասնավորապես 4.3 և 4.7 կետերի հետ:

- **4.3.** Մինչև 2030թ. բոլոր կանանց և տղամարդկանց համար ապահովել մատչելի և որակյալ տեխնիկական, միջին-մասնագիտական և բարձրագույն, այդ թվում՝ համալսարանական կրթության հավասար հասանելիություն - *Հայաստանի դիվանագիտական դպրոցում ուսումն անվճար է, ԴԴ ընդունելության մրցույթին կարող են մասնակցել բարձրագույն կրթություն ունեցող Հայաստանի քաղաքացիները:*
- **4.7.** Մինչև 2030թ. ապահովել, որ բոլոր սովորողները ձեռք բերեն կայուն զարգացումը խթանելու համար անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ, այդ թվում, ի թիվս այլոց, կայուն զարգացման և կայուն կենսակերպի, մարդու իրավունքների, գենդերային հավասարության, խաղաղության և բռնությունը մերժող մշակույթի խթանման, «աշխարհի քաղաքացիության», ինչպես նաև մշակութային բազմազանության և կայուն զարգացման մեջ մշակույթի ունեցած ավանդը գնահատող ուսուցմամբ – *Դիվանագիտական դպրոցի «Միջազգային հարաբերություններ և դիվանագիտություն» և դիվանագետների և այլ պետական մարմինների աշխատակիցների վերապատրաստման ծրագրերի առարկայացանկերում կան միջազգային կազմակերպությունների, դրանց կառուցվածքների, գործունեության և նպատակների մասին դասընթացներ, Դպրոցում դասավանդվում է նաև «Գիտության դիվանագիտություն» առարկան, որը նպատակ ունի նպաստելու աշխարհի պետությունների միջև համագործակցության խթանմանը հանուն ընդհանուր նպատակների իրագործման: Դասընթացի ժամանակ քննարկվում են ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակները որպես համագործակցության ոլորտներ:*

2. ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ՀԱՏՎԱԾՈՒՄ

Դիվանագիտական դպրոցի գործունեությունը ներկայացված է մեկ միջոցառմամբ՝ միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ոլորտում մասնագետների պատրաստում և վերապատրաստում: Տվյալ միջոցառումն իր մեջ ներառում է.

1. Դիվանագիտական կադրերի պատրաստման «Միջազգային հարաբերություններ և դիվանագիտություն ծրագիրը»,

2. Դիվանագետների և պետական մարմինների արտաքին կապերի համար պատասխանատու ստորաբաժանումների աշխատակիցների վերապատրաստման ծրագիրը,
3. «Հյուպատոսական գործունեություն» թեմայով դիվանագետների վերապատրաստման ծրագիրը,
4. Դիվանագետների վերապատրաստման դասընթացները, այդ թվում՝ օտար լեզուների դասընթացները,
5. ՀՀ դիվանագիտական ներկայացուցչություններում ԴԴ շրջանավարտ դիվանագետների վերապատրաստումը,
6. Օտարերկրյա դիվանագետների վերապատրաստման դասընթացները,
7. Դիվանագիտական դպրոցի գրադարանի համալրումը նոր գրականությամբ,
8. Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ոլորտում հետազոտական աշխատանքների իրականացումը, հրատարակությունները, ինչպես նաև գործընկեր հաստատությունների հետ միջազգային համագործակցության հաստատումը:

3. ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ՀԱՏՎԱԾՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

3.1. Բազային բյուջեի գնահատում

Դիվանագիտական դպրոցի գերակա նպատակը դիվանագիտական և պետական ծառայության արդյունավետության բարձրացումն է: Դիվանագիտական կադրերի պատրաստման, ինչպես նաև դիվանագետների և այլ պետական գերատեսչությունների աշխատակիցների վերապատրաստման ծրագրերի շրջանակներում դասավանդում են արտերկրի լավագույն բուհերի բարձր որակավորում ունեցող մասնագետներ, ՀՀ փորձառու փորձագետներ: Դպրոցն իրականացնում է նաև օտարերկրյա կրտսեր դիվանագետների դասընթացներ, ինչը Դիվանագիտական դպրոցին հնարավորություն է տվել ծառայել նաև այլ երկրների երիտասարդ դիվանագետների շրջանում պետության հեղինակության, վարվող քաղաքականության և տեսլականի ներկայացման նպատակին: Այս ծրագրերը միջնաժամկետ հատվածում իրականացնելու համար ՀՀ ԱԳՆ դիվանագիտական դպրոցը նախատեսում է 301,467.6 հազար ՀՀ դրամ:

3.2. Նոր նախաձեռնություններ

ՀՀ ԱԳՆ դիվանագիտական դպրոց ՊՈԱԿ-ն այս պահին նոր նախաձեռնություններ չունի:

3.3. Պարտադիր և հայեցողական ծախսերը

1) <u>Պարտադիր ծախսերին դասվող միջոցառումներ</u>

Դիվանագիտական դպրոցի միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ոլորտում մասնագետների պատրաստում և վերապատրաստում միջոցառումը դասվում է պարտադիր ծախսերի շարքին: Դիվանագիտական դպրոցի գործունեությունը և նպատակները հստակ սահմանված են Դիվանագիտական ծառայության մասին ՀՀ օրենքով (Գլուխ 12, Հոդված 52):

2) <u>Հայեցողական ծախսերին դասվող միջոցառումներ</u>

Դիվանագիտական դպրոցը հայեցողական ծախսերին դասվող միջոցառումներ չունի:

3.4 Ծախսերի այլընտրանքային սցենարները

ՀՀ ԱԳՆ դիվանագիտական դպրոցն իրականացնում է ՀՀ դիվանագիտական ծառայության մասին օրենքով, ՀՀ կառավարության որոշմամբ և իր կանոնադրությամբ նախատեսված դիվանագիտական կադրերի պատրաստման, ինչպես նաև դիվանագետների և պետական գերատեսչությունների աշխատակիցների վերապատրաստման ծրագրեր, որոնք ունեն ծրագրային և պարբերական բնույթ: 1) Դիվանագիտական դպրոցի բյուջեի 5% կրճատման դեպքում դպրոցը չի իրականացնի արտերկրի կրտսեր դիվանագետների՝ Հայաստանին և Հարավային Կովկասին Հայաստանի դիրքերից ծանոթացնող վերապատրաստման 1-2 ծրագիր: Այս նպատակով ֆինանսավորում ստացած դասընթացների կրճատման արդյունքում Դիվանագիտական դպրոցը կդադարի ՀՀ համար շահեկան տեսանկյունից ներկայացնել մեր երկիրը և տարածաշրջանը բազմաթիվ այլ տարածաշրջանների դիվանագետներին, ինչն էլ կազդի ԱԳՆ հեղինակության վրա: Հնարավոր կրճատվող ծրագրերի թիվը կախված կլինի նրանից, թե որ տարածաշրջանների որ երկրներից կընտրվեն/կբացառվեն մասնակից երկրները և ծրագրերն ինչ ծավալով կֆինանսավորվեն դպրոցի կողմից: Ծրագրերի ֆինանսավորումը ներառում է հրավիրվողների գիշերակացը, սնունդը, երկրի ներսում տրանսպորտային փոխադրումները, մշակութային վայրեր այցելությունները, դասախոսների վարձատրությունը և, որոշ երկրների դեպքում՝ նաև մասնակիցների մի մասի ճանապարհածախսը:

Դիվանագիտական դպրոցի բյուջեի հետագա կրճատումը վտանգի տակ կդնի նաև օտար լեզուների դասավանդման ծրագրերը, ինչպես նաև արտաքին մրցույթներով ՀՀ ԱԳՆ աշխատանքի ընդունված երիտասարդ դիվանագետներին և պետական գերատեսչությունների արտաքին կապերով զբաղվող պատասխանատուներին միջազգային հարաբերությունների և դիվանագիտության մասին հիմնարար գիտելիքներ և հմտություններ հաղորդելու գործառույթը, ինչն անմիջականորեն ազդելու է դիվանագիտական ծառայության արդյունավետության բարձրացման հրամայականի վրա:

Դիվանագիտական դպրոցի՝ միջազգային գործընկերների հետ համագործակցությունը շարունակաբար աճում է. կնքվել են երկու տասնյակից ավելի փոխգործակցության հուշագրեր, և այդ գործընթացն այժմ ավելի ինտենսիվ է դարձել: Միջազգային համագործակցության շնորհիվ արտերկրի գործընկերների հետ կազմակերպվել են ներկայացուցչական գիտական համաժողովներ:

Ֆինանսական միջոցների կրճատումը թույլ չի տա շարունակել ներգրավել դիվանագիտության և միջազգային հարաբերությունների ոլորտի արտերկրի լավագույն մասնագետներին, ինչպես նաև նախաձեռնել արդիական նոր դասընթացներ ՀՀ ԱԳՆ և պետական գերատեսչությունների աշխատակիցների համար:

4. ՈՉ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ ՍՊԱՍՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

ՀՀ ԱԳՆ դիվանագիտական դպրոցի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքում ոչ բյուջետային աղբյուրներից եկամուտներ չեն ակնկալվում:

5. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ/ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Դիվանագիտական դպրոցի համար կիրառելի չէ:

6. ՄԻՋՈԼՈՐՏԱՅԻՆ (ԽԱՉՎՈՂ) ԲՆՈՒՅԹԻ ԱՌԱՆՁԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ/ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Դիվանագիտական դպրոցը միջոլորտային (խաչվող) բնույթի առանձին քաղաքականություններին առնչվող ծրագրեր/միջոցառումներ չունի:

7. ԱՐՏԱՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ՝ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՍՏԱՑՎՈՂ ՎԱՐԿԵՐԻ ԵՎ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾՐԱԳՐԵՐԸ/ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Դիվանագիտական դպրոցը արտաքին աղբյուրներից՝ պետական բյուջե ստացվող վարկերի և դրամաշնորհների հաշվին իրականացվող ծրագրեր/միջոցառումներ չունի:

8. ՄԻՋՆԱԱԺԱՄԿԵՏ ՀԱՏՎԱԾՈՒՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Լրացված է Հավելված 8-ում:

9. ՀԱՅՏԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՌԻՍԿԵՐԸ

1. Դիվանագիտական դպրոցի դասախոսները հրավիրվում են արտերկրից: Համատարած թանկացումների պատճառով հրավիրվող դասախոսները ֆինանսապես արդարացված չեն համարում այլ երկիր ճամփորդելը, եթե նրանց վարձավճարները չեն արտացոլում իրենց երկրներում առկա գնաճը: Սա կարող է ինչ-որ պահի վտանգել դպրոցի ծրագրերի իրականացումը, քանի որ առանցքային առարկաների՝ պահանջվող որակավորմամբ տեղացի մասնագետներ գրեթե առկա չեն:
   Կանխատեսելի չեն ավիափոխադրումների և հյուրանոցային ծառայությունների մատուցման գների փոփոխությունները:
   Հարկավոր է իրականացնել դրույքների կանոնավոր վերանայում՝ սղաճին համապատասխան:
2. Դիվանագիտական դպրոցի դասախոսները վարձատրվում են արտարժույթով պայմանավորված դրույքների համաձայն, իսկ ֆինանսավորումը բյուջեից ստացվում է ՀՀ դրամով: Դրամի փոխարժեքի փոփոխությունները նույնպես կարող են հանգեցնել դրամական միջոցների անբավարարության:
   Ըստ հնարավորության՝ հարկավոր է ներառել փոխարժեքի հնարավոր տատանման կանխատեսումները հատկացվող միջոցներում:
3. ԴԴ աշխատակիցների հոսունությունը կանխելու համար ցանկալի է իրականացնել նրանց վարձատրության գնաճն արտացոլող կանոնավոր ինդեքսավորում:

10. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ /ԱՆՁՆԱԳԻՐ/

Լրացված է Հավելված 13-ում:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ